



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՀՈԼԻՎՈՒՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 13 Փետրուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագին, պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը եւ պիտի նախագահէ Հոգեւոյն Ս. Վաչէ Ա. Զինյ. Նազգաշեանի վախճանման Ա. տարելիցի հոգեհանգստեան արարողութեան:

### PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. GARABED CHURCH IN HOLLYWOOD

On Sunday, February 13<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

Following Divine Liturgy, the Prelate will preside over requiem service on the first anniversary of the passing of Archpriest Fr. Vache Naccashian.

\*\*\*

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ԱՉԳ. Ռ. ԵՒ Ա. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍՉԱՐԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 13 Փետրուարին, կ.ե. ժամը 1:30-ին, Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի տեսչարանի բաժնի օրհնութեան եւ ցուցանակի բացման արարողութիւնը տեղի պիտի ունենայ ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազան Հօր: Սրբազան Հօր պիտի ընկերանայ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Անցեալ տարի, վարժարանի հիմնադրութեան 40-ամեակի ձեռնարկի ընթացքին, յայտարարուած էին հովանաւորներուն անունները՝ ՏԵՐ եւ Տիկին Վահէ եւ Նորա Եագուպեան եւ Դոկտ. եւ Տիկին Վիգէն եւ Ազիթա Եագուպեան:

Ձեռնարկը կազմակերպուած է վարժարանի տնօրէնութեան եւ Ուսումնական Մարմինին կողմէ:

Ներկայ պիտի ըլլան եկեղեցւոյ եւ շրջանի միութեանց, կազմակերպութեանց եւ կրթական համակարգի ներկայացուցիչներ, անդամներ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի մեծ ընտանիքը:

## **PRELATE TO PRESIDE OVER UNVEILING AND BLESSING OF R. & A. PILIBOS SCHOOL PRINCIPAL'S OFFICE**

On the afternoon of Sunday, February 13<sup>th</sup>, the Prelate will visit Rose and Alex Pilibos School where he will bless the principal's office and preside over the unveiling of the plaque outside the office. Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian will accompany the Prelate.

The ceremony has been organized by the school administration and Education Board.

At last year's 40<sup>th</sup> anniversary celebration of the school, it was announced that the sponsors of the office are Mr. and Mrs. Vahe and Nora Yacoubian, and Dr. and Mrs. Viken and Azita Yacoubian.

\*\*\*

## **ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻՆԴԱԿԱՆ ԽԱՐՈՅԿ**

### **- ՏԱՐԵԿԱՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ Զ.Մ.Ը.Մ.-Ի ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ԶԵՏ**

Երկուշաբթի, 14 Փետրուարը մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի տաճար ընծայման տօնն է, Տեառնընդառաջ:

Տեառնընդառաջի նախօրեակին, Կիրակի, 13 Փետրուարի երեկոյեան ժամը 5-ին, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս պիտի կատարուի Տեառնընդառաջի նախատօնակի արարողութիւն, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, որ այս առիթով պիտի ուղղէ իր պատգամը:

Տարիներու աւանդութեան համաձայն, Զ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական խմբապետական կազմերը ներկայ պիտի ըլլան արարողութեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ մեր եկեղեցւոյ երիտասարդական խմբակներու անդամ-անդամուհիները:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ պիտի վառուի աւանդական խարոյկը:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը, ներկայ հոգեւորականները, Ազգ. Վարչութեան, եկեղեցւոյ ծխական մարմիններու, Զ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցիչները եւ եկեղեցիներու երիտասարդականի անդամները «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ պիտի համախմբուին սիրոյ

սեղանի շուրջ, հիւրընկալութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Զ.Մ.Ը.Մ.-ի Սկաուտական Խորհուրդին:

## **EVENING SERVICES AND TRADITIONAL BONFIRE ON THE EVE OF THE PRESENTATION OF OUR LORD TO THE TEMPLE**

### **- ANNUAL MEETING WITH HOMENETMEN SCOUTS**

Monday, February 14<sup>th</sup>, is the Feast of the Presentation of our Lord to the Temple.

Eve of the Feast services will be held on Sunday, February 13<sup>th</sup>, at 5:00 p.m. at St. Mary's Church in Glendale.

The Prelate will preside over the service and deliver his message.

In keeping with tradition, Homenetmen scouts and representatives, as well as members of the Armenian Church Youth Association, will be in attendance and will be hosted to dinner with the Prelate at ԶԱրմենակ Եր Բեդրոսյան Սրահ Hall at the conclusion of the services.

\*\*\*

## **ԱՌԱՋԱԽՈՐԱՑ ՊԱՅՔ**

Շաբաթ, 19 Փետրուարին, մեր եկեղեցին պիտի տօնէ Ս. Սարգիս Զօրավարի տօնը:

Ս. Սարգիս Զօրավարի տօնը շարժական տօն է, կը զուգահիշի Յունուար 14-էն Փետրուար 15-ի միջեւ ու կը հետեւի Առաջաւորաց հինգօրեայ պահքին, որ հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Զայրապետին կողմէ:

Առաջաւորաց պահքին առիթով եւ Ս. Սարգիսի տօնին շաբթուան սկիզբը, ուխտաւորներ երեք օր ծոմ կը պահեն ու կ'աղօթեն, որ Ս. Սարգիսը իրականացնէ իրենց ուխտը:

Ծոմապահութիւնը կը սկսի Կիրակի, 13 Փետրուարի կէս գիշերին, եւ կը շարունակուի մինչեւ Չորեքշաբթի, Փետրուար 16-ի առաւօտը:

Չորեքշաբթի առաւօտեան, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Առաջաւորաց պահքի խաչահանգիստ եւ ջրօրհնէք կը կատարուի, որմէ ետք հաւատացեալ ծոմապահները Ս. Զաղորդութիւն եւ օրհնուած ջուր կը ստանան:

## **MORNING SERVICES AND BLESSING OF WATER ON THE FAST OF THE CATECHUMENS**

Saturday, February 19<sup>th</sup>, is the Feast of St. Sarkis. The feast is moveable and is observed the weekend after the Fast of the Catechumens, a fast established by St. Gregory the Illuminator.

The Sunday preceding St. Sarkis is the eve of the Fast of the Catechumens, when faithful fast for three days in fulfillment of their prayers.

The fast begins at midnight on Sunday, February 13 and continues until the morning of Wednesday, February 16, when faithful gather at Prelacy Churches to break their fast by receiving Holy Communion and blessed water.

\*\*\*

### ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ Ա. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՆԱՐԿ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ



մը, որ տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, եւ որուն ընկերացաւ ճաշկերոյթ: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազանին՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայութիւնն ու հովանաւորութիւնը: Ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան, Ազգ. Առաջնորդարանի յանձնախումբերու ներկայացուցիչներ եւ անլի քան հարիւր մասնակցիներ:



հանդիսավարութիւնը: Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Առաջնորդ Սրբազանը, որ կատարեց սեղանի օրհնութիւնը ու օրուան յատուկ բարեմաղթութիւններ փոխանցեց ներկաներուն:

Ընդառաջելով 2011ը  
Հայ Մանուկի Տարի  
հռչակող Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ  
Ա. Կաթողիկոսի  
պատգամին, Ազգային  
Առաջնորդարանի Տիկնանց  
Օժանդակ Մարմինը  
Հինգշաբթի, 10 Փետրուարի  
կեսօրին կազմակերպած էր  
դասախօսական ձեռնարկ

Դասախօսական այս  
ձեռնարկը մեր Թեմին մէջ  
առաջին պաշտօնական  
հանդիպումն էր, նուիրուած՝  
Հայ Մանուկի Տարուան.  
յառաջիկայ ամիսներուն,  
նախատեսուած են այլ  
ձեռնարկներ եւս:

Բացման խօսք  
արտասանեց Տ. Օ.  
Մարմինի անդամներէն  
Տիկին Հուրիկ Ապտուլեան  
որ նաեւ կատարեց

Ճաշի պահեն ետք, յաջորդաբար դասախօսեցին Ազգ. Վահան Եւ Անուշ Շամլեան վարժարանի փոխ տնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիէլեան Եւ Տնօրէն Տիար Վազգէն Մատենլեան, իբրեւ նիւթ ունենալով հայ մանուկին դաստիարակութիւնը՝ ամերիկեան միջավայրի մէջ, ու հայեցի դաստիարակութեան իմաստն ու նախադրեալները:

Ձեռնարկին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան ողջունեց ներկաները, միութենական ներկայացուցիչները, ապա դրուատիքով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի Տ. Օ. Մարմինի աշխատանքին: Ապա, ան կարեւորութեամբ կանգ առաւ հայ մանուկին դաստիարակութեան ու հոգեմտաւոր աճումին մէջ ծնողներուն, ուսուցիչին, դպրոցին ու եկեղեցւոյ դերին վրայ, նկատել տալով, որ ազգային տարբեր բնագաւառներու մէջ գործողներ ու ծառայողներ հայ մանուկի դաստիարակութեան ու իրենց ազգային աշխատանքներուն մէջ աւելի արդիւնաւոր կրնան ըլլալ, եթէ փոխադարձաբար զիրար ճանչնան ու գործակցութեան միջոցներ ստեղծեն:

Հանդիպումը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

***(Մանրամասն թղթակցութիւնը տեսնել Առաջնորդարանիս կայքէջին վրայ):***

## "YEAR OF THE ARMENIAN CHILD" KICKS OFF WITH A LITERARY LUNCHEON AT THE PRELACY



On Thursday, February 10<sup>th</sup>, 2011, "Year of the Armenian Child" celebrations began with a literary luncheon held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Ladies Auxiliary. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and over a hundred

guests attended the event.

The event began with welcoming remarks by Ladies Auxiliary member and Master of Ceremonies Mrs. Hourig Abdulian.

The Prelate then offered the invocation, after which lunch was served.

The lecture began after lunch. The keynote speakers were Vahan and Anoush Chamlian School Principal Mr. Vazken Madenlian and Vice-Principal Mrs. Rita Kaprielian, and the topic was "The Armenian Child within the American Social Environment".

The first lecture was presented by Mrs. Kaprielian. Speaking on the Armenian child in the American environment, she stressed that Armenian Schools have a twofold mission in this regard; to instruct children on how to be

good individuals, and also how to be good Armenians. She then reflected on the positive and negative aspects of the outside influences Armenian children are subject to, and how parents can provide a healthy environment in which our children can grow up to be not only honorable individuals but proud Armenians.



Mr. Madenian was then invited to present his lecture, the foundation of which was how Armenian children can grow up to become active and contributing members of the Armenian community. He stated that those who grow up to become active members of their community are reared from a young age, are raised in Armenian

schools and within Armenian environments whether athletic, cultural, or political organizations. Therefore, if the school is the place where they receive this education, community organizations are where they learn how to apply what they have learned and get first hand experience on how to contribute to the community, things that cannot be learned inside the classroom.

After both presentations, the Prelate was invited to deliver his message. He commended the Ladies Auxiliary for organizing the event in celebration of the Armenian Child, and the two keynote speakers for their informative and enlightening presentations.

He then spoke of the crucial role parents, teachers, and our churches play in the proper instruction and development of our children. The Prelate reflected on the proclamation of H.H. Catholicos Aram I, in which His Holiness greatly stresses the reality that our children are our future and to look to the future of our nation, our people, and our church we need to look at our children for in the words of our Lord, "Train up a child in the way he should go, and when he is old he will not depart from it". The path of our children starts at home from the time of birth, and continues as they start attending school, church, Sunday School, and community organizations, said the Prelate and concluded by stressing the unique mission Armenian elders have with regards to the education of our children and the importance of maintaining a balance in their spiritual, national, and social development.

The luncheon came to a close with the benediction by the Prelate.

(For the full press release please see the news section of the Prelacy website).

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Երեքշաբթի, 8  
Փետրուարի յետմիջօրէին,  
Թեմիս բարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Ս.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
Ազգ. Առաջնորդարանին մէջ  
ընդունեց Յայկական  
Ոսկրածուծի Հիմնադրամի  
Նախագահ Տոքթ. Ֆրիտա  
Ճորտընի եւ Հիմնադրամի  
խումբ մը կամաւոր  
Նուիրեալներու  
այցելութիւնը:  
Հիւրընկալութեան

մասնակցեցան Կրօնական Ժողովի ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Ազգ. Կարչութեան անդամներ Տեարք Խաչիկ Երեցեան ու Թորոս Զէչեճեան:

Այցելութիւնը թէւ ուներ աւանդական բնոյթ, տրուած ըլլալով, որ Հիմնադրամի ներկայացուցիչները ամէն ամանորի առիթով կ'այցելէն Առաջնորդ Սրբազանին, բարեմաղթութիւններ փոխանցելու համար, այսուհանդերձ, հանդիպումը եղաւ աշխատանքային: Հիմնադրամի ներկայացուցիչները ընդհանուր գիծերու մէջ բացատրութիւններ տուին իրենց աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին:

Սկստի ունենալով, որ 2011 տարին ձօնուած է Հայ Մանուկին, Տոքթ. Ֆրիտա Ճորտըն հարց տուաւ, թէ Առաջնորդարանս արդեօք ի՞նչ ձեւով կրնայ նպաստել Հ. Ո. Հիմնադրամի աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազանը ողջունեց այս տրամադրութիւնը եւ թելադրեց, որ Ս. Յարութեան յաջորդ Կիրակին, որ Նոր Կիրակի է ու քրիստոնեայ հաւատացեալին համար կը խորհրդանշէ Նոր կեանքի մը սկիզբը, Հիմնադրամը որոշ աշխատանք կատարէ մեր եկեղեցիներուն շրջափակին մէջ: Արդարեւ, ըլլալով Նոր կեանքի առիթ տուող բարեսիրական հիմնարկի ծառայողներ, Հ. Ո. Հիմնադրամի ներկայացուցիչները մեր Թեմի եկեղեցիներուն ամօքէ պիտի հաստատեն սեղաններ, ժողովուրդին լուսաբանութիւն տալու համար կեանքեր փրկելու կոչուած այս աշխատանքին մասին ու արձանագրելու պատուաստումի համար Նուիրաբերող կամաւորներ: Չուզահեռաբար, Հիմնադրամը հաղորդակցութիւններ պիտի հաստատէ հայրենակցական միութիւններու հետ, նմանապէս կամաւոր Նուիրաբերողներ արձանագրելու համար, որովհետեւ գիտական տուեալներու հիմամբ, հազուադէպ հիւանդութիւններէ տառապողներու ոսկրածուծի պատուաստումին համար Նախընտրելի է ունենալ Նուիրաբերողներ՝ որոնք ունին իրերանման ժառանգականութիւն: Այլ աշխատանքներու շարքին են հանգանակային քայլեր ու տարեկան քայլարշաւը, որոնց մասին ատենին պիտի հրապարակուին անհրաժեշտ տեղեկութիւնները:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հ. Ռ. Հիմնադրամի աշխատանքը, նուիրեալներուն անսակարկ ծառայութիւները եւ յիշեցուց, որ Ազգ. Առաջնորդարանն ու մեր եկեղեցիները միշտ ալ պատրաստ եղած են աջակցելու Հիմնադրամի աշխատանքներուն:

## **PRELATE WELCOMES ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY REPRESENTATIVES**

On Tuesday, February 8<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR), led by president of the organization Dr. Frieda Jordan. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council members Mr. Khatchig Yerezian and Mr. Toros Kejejian participated in the meeting.

The meeting began with a report by the representatives on the upcoming projects of the ABMDR. Given that this year is the "Year of the Armenian Child", Dr. Frieda Jordan inquired as to how the ABMDR can mark this proclamation through their activities and with the support of the Prelacy. The Prelate welcomed this inquiry and suggested that they start an outreach effort at Prelacy churches on the first Sunday following Easter, New Sunday, being that New Sunday symbolizes the start of a new life and the ABMDR gives new life to sick children. Thus, on Sunday, May 1<sup>st</sup>, members of the ABMDR will set up information booths at Prelacy churches to inform the public about the services the organization provides and to register donors. The ABMDR will also be in contact with compatriotic unions and Armenian organizations to provide information and details and also to register donors. Also planned are various fundraising events and the annual walk-a-thon, details of which will be reported in due time.

The Prelate commended the work that is carried out by the ABMDR and reaffirmed the full support of the Prelacy and Churches in their mission.

\*\*\*